ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«15 սեպտեմբերի» 2015 թվականի № 395-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ԾԱՅՐԱԿԵՏԱՅԻՆ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐԸ ARM WGS-84 ԿՈՈՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 111-Ն որոշման N2 հավելվածի 4-րդ կետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության պետին՝ սույն հրամանը ստանալու պահից.
   1) 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչությանը և նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ին ըստ մարզերի տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքում ընդերքօգտագործման իրավունք ստացած այն ընդերքօգտոգործողների ցանկը (ցանկ 1), որոնց ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում տրամադրված ընդերքի տեղամասերի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 կոորդինատային համակարգին չեն համապատասխանեցվել և այն ընդերքօգտոգործողների ցանկը (ցանկ 2), որոնց ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում տրամադրված ընդերքի տեղամասերի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 կոորդինատային համակարգին համապատասխանեցվել են (միասին՝ ցանկեր).
   2) 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչությանը տրամադրել ցանկ 1-ում ներառված

ընդերքօգտագործողների աշխատանքային նախագծերի «ընդհանուր տեղեկություններ տեղամասի վերաբերյալ» մասերի կրկնօրինակները.

3) Մեկամսյա ժամկետում նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչությանը տրամադրել ցանկ 2-ում ներառված ընդերքօգտագործողների աշխատանքային նախագծերի «Ընդհանուր տեղեկություններ տեղամասի վերաբերյալ» մասերի կրկնօրինակները:

2. Նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝

1) Սույն հարմանի 1-ին կետում նշված ցանկ 1-ը ստանալու պահից յոթ աշխատանքային օրվա ընթացքում նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչությանը թղթային և էլեկտրոնային եղանակով տրամադրել ցանկում նշված ընդերքօգտագործողների ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերին առնչվող՝ ֆոնդում առկա լեռնահատկացումների, բլոկավորումների և երկրաբանական քարտեզների պատճենները.

2) Սույն հարմանի 1-ին կետում նշված ցանկ 2-ը ստանալու պահից մեկամսյա ժամկետում նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչությանը թղթային և էլեկտրոնային եղանակով տրամադրել ցանկում նշված ընդերքօգտագործողների ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերին առնչվող՝ ֆոնդում առկա լեռնահատկացումների, բլոկավորումների և երկրաբանական քարտեզների պատճենները:

3. Նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության պետին՝

1) Նախարարության աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության կողմից տրամադրվող ցանկերը և նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ից ու նախարարության աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալությունից սույն հրամանի 1-ին և 2-րդ կետերով սահմանված համապատասխան նյութերը ստանալուց հետո կատարել ցանկերում ներառված ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված ընդերքի տեղամասերի կոորդինատների ճշգրտումներ՝ անհրաժեշտության դեպքում ընդերքօգտագործողի ներկայացուցչի մասնակցությամբ իրականացնելով չափագրման աշխատանքներ.

2) ցանկերում ներառված յուրաքանչյուր տեղամասի համար կատարված ճշգրտումների արդյունքները՝ համապատասխան եզրակացությանբ, տրամադրել նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ին:

4. Նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝

1) Նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության կողմից ցանկերում ներառված ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված ընդերքի տեղամասերի ARM WGS-84 կոորդինատային համակարգով ճշգրտված ծայրակետային կոորդինատների վերաբերյալ համապատասխան եզրակացությունը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում համադրել ՊՈԱԿ-ում առկա նյութերի կոորդինատների հետ և համապատասխանության դեպքում՝ համապատասխան եզրակացությամբ, նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչությունից ստացված

եզրակացության հետ միասին, ներկայացնել նախարարության աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալությանը՝ սահմանված կարգով ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում փոփոխություններ կատարելու նպատակով.

2) նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության կողմից կատարված աշխատանքների արդյունքում ճշգրտված ծայրակետային կոորդինատների և ֆոնդում առկա նյութերում կոորդինատների մեջ անհամապատասխանությունների դեպքում՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնել նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչությանը՝ համատեղ քննարկումներ և ճշգրտումներ կատարելու նպատակով:

5. Նախարարության աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության պետին՝

Սույն հրամանի 4-րդ կետի 1-ին ենթակետում նշված եզրակացությունները ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարին ներկայացնել համապատասխան առաջարկություն:

6. Նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության, ընդերքի տրամադրման գործակալության պետերին և նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝

Մինչև սույն հրամանի ուժի մեջ մտնելը՝ ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում կատարված՝ ընդերքի տեղամասերի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 կոորդինատային համակարգով փոխարինված, սույն հրամանի 1-ին կետի ցանկ 2-ի մեջ ներառված ընդերքօգտագործողների մոտ կատարված կոորդինատների փոփոխությունների մեջ անճշտությունների ի հայտ գալու դեպքում՝ կատարել ճշտումներ սույն հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով, 2-րդ կետի 1-ին ենթակետով, 3-րդ կետով, 4-րդ կետի 2-րդ ենթակետով և 5-րդ կետով սահմանված կարգով:

7. Սույն հրամանով սահմանված ցանկ 1-ի հետ կապված գործողությունների իրականացման վերջնաժամկետ սահմանել 2015 թվականի դեկտեմբերի 31-ը:

8. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի վարչության պետին:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ